**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ՆՈՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Նորաշեն
համայնք, ՀՀ Լոռու մարզ, գ. Նորաշեն, Կ:Դեմիրճյան 116, Հեռ.
093 47 54 48 , norashen.lori@mta.gov.am

N 141-2017
*29 օգոստոսի 2017թ.*

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ**
**ՄԱՐԶՊԵՏ**
**ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Ա. Նալբանդյան.

Ձեզ եմ ներկայացնում ՀՀ Լոռու մարզի Նորաշեն համայնքի ավագանու թիվ 15 որոշումը՝ կից հավելվածով և 16-Ա որոշումը:

Առդիր՝ 3 թերթ:

29.08.2017

X

**Համայնքի ղեկավար՝** **ԱՐՄԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**

*Կատ.* ՝

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԼՈՌՈՒ ՄԱՐԶ**
**ՆՈՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

# ՈՐՈՇՈՒՄ

«22» «օգոստոսի» 2017թվականի թիվ 15

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, ««Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի, համայնքի ավագանու 2017 թվականի հուլիսի 7-ի «Հանձնաժողով կազմելու մասին» թիվ 13-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները՝

Նորաշեն համայնքի ավագանին որոշում է.

1.Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն կից հավելվածի:

2.Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ավագանու անդամներ

| | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաղդասարյան Արայիկ | | | |
| Բաղդասարյան Իշխան | | | |
| Բաղդասարյան Վալերյա | | | |
| Էլոյան Արմինե | | | |
| Մարտիրոսյան Ռաֆիկ | | | |
| Մկրտչյան Մերուժան | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Նորաշեն համայնքի ավագանու
2017 թվականի օգոստոսի 22-ի թիվ 15 որոշում

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1. | Սուքիասյան | Գեղանուշ | Ռոմիկի | 15.0 հազար դրամ |
| 2. | Բաղդասարյան | Նորիկ | Նիկոլայի | 15.0 հազար դրամ |
| 3. | Բաղդասարյան | Իրինա | Համբարձումի | 15.0 հազար դրամ |
| 4. | Խաչատրյան | Իզաբելլա | Միշիկի | 30.0 հազար դրամ |
| 5. | Մկրտչյան | Ոսկեհատ | Ալեքսանի | 15.0 հազար դրամ |
| 6. | Սարգսյան | Լիանա | Սարգսի | 15.0 հազար դրամ |
| 7. | Մնացականյան | Գայանե | Վաղինակի | 20.0 հազար դրամ |
| 8. | Խուդաղուլյան | Անդրանիկ | Հարությունի | 25.0 հազար դրամ |

Աշխատակազմի քարտուղար՝ Ա. Մկրտչյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
# ՆՈՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Նորաշեն համայնք,գ. Նորաշեն
Հեռախոս՝ 093475448
Էլ.Փոստ՝ norashen.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«22» «օգոստոսի» 2017 թվականի թիվ 16-Ա

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ՀՀ կառավարության 12.04.2001 թվականի թիվ 286-Ն որոշմամբ հաստատված կարգով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի ներկայացրած առաջարկությունը՝

Նորաշենի համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Նորաշեն համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 06-082-0017-0004-001 ծածկագրով 920.36 քառ. մ մակերեսով թիվ 2 ավտոպարկը, 06-082-0017-0004 ծածկագրով 0.2917 հա մակերեսով հողամասը 25 տարի ժամկետով վարձակալությամբ տրամադրել:
2. 06-082-0017-0004-001 ծածկագրով թիվ 2 ավտոպարկի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել 50000 ՀՀ դրամ, 06-082-0017-0004 ծածկագրով 0.2917 հա մակերեսով հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել 5000 ՀՀ դրամ:
3. Մրցույթի մասնակցության վճարը 5000 ՀՀ դրամ, նախավճարի և քայլի չափը մեկնարկային գնի 5 տոկոսի չափով:
4. Համայնքի ղեկավարին՝ ապահովել վարձակալության իրավունքով տրամադրվող գույքի հայտարարության հրապարակային ծանուցումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

| Համայնքի ավագանու անդամներ՝ | | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|---|
| Բաղդասարյան | Արայիկ | | | |
| Բաղդասարյան | Իշխան | | | |
| Բաղդասարյան | Վալերյա | | | |
| Էլոյան | Արմինե | | | |
| Մարտիրոսյան | Ռաֆիկ | | | |
| Մկրտչյան | Մերուժան | | | |

Համայնքի ղեկավար՝ Ա. Բաղդասարյան